ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

2024 ԹՎԱԿԱՆԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2024 թ. փետրվարի 28-ին 12:00–ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)
Արմենուհի Պետրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի անդամ)
Նարինե Հովհաննիսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ ժ/պ (Հանձնաժողովի անդամ)
Վերոնիկա Խորասանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում
2. Գնահատումների ամփոփում

1. Օրակարգի 1-ին հարց

Արթուր Մարտիրոսյանը հանձնաժողովի նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո ձայների 4 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց.

1.1 Հաստատել նիստի օրակարգը:

2 Օրակարգի 2-րդ հարց

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին փոխանցեց ԵՔ-ԴՄ-ԵԱ-02/24 ծածկագրով հայտարարված «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դրամաշնորհի հատկացման մրցույթին դիմած «Աութսորս» ՍՊԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) մրցութային հայտի

վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ ս.թ. փետրվարի 22-ի թիվ 02 նիստով պահանջված լրամշակումների հետ միասին:

Ուսումնասիրելով ԵՔ-ԴՄ-ԵԱ-02/24 ծածկագրով հայտարարված դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ ներկայացրած կազմակերպության կողմից ներկայացված դրամաշնորհային հայտի փաթեթը՝ հանձնաժողովը արձանագրեց, որ թեև նախորդ նիստով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացվել են ժամանակին, սակայն լրամշակված փաթեթում՝

- Ծրագրի աշխատակազմի 2 անդամների ինքնակենսագրականները չեն պարունակում իրենց՝ Ծրագրով ստանձնվող գործառույթների լիարժեք իրականացումը հավաստիացնող տեղեկատվություն,
- Ներկայացված դասընթացավարներից երկուսի մասնագիտական փորձառությունը հիմնավորված չէ՝ ըստ թեմատիկ բաշխվածության,
- Ներկայացվել է լրամշակված ֆինանսական նախահաշիվ՝ ավելի բարձր գնով, քան ներկայացված է armeps համակարգով:
- Լրամշակված Ծրագրում նշված չէ, թե Կազմակերպությունը կոնկրետ ինչ քայլեր պետք է ձեռնարկի, ինչ մեդիագործիքներ կիրառի Ծրագրի տեսանելիության բարձրացման, արդյունքների հանրահռչակման համար:

Այնուհետև հանձնաժողովի անդամները քարտուղարին փոխանցեցին իրենց կողմից լրացված և ստորագրված գնահատման թերթիկները (կցվում են) մրցույթի հայտերի գնահատման արդյունքներն ամփոփելու համար:

Հանձնաժողովը ամփոփեց գնահատման արդյունքները համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Տեղեկություն հրավերով պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ	Տեղեկություն մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմանների ն համապատասխան լինելու վերաբերյալ	Մասնակցի ներկայացրած ֆինանսական նախահաշվի ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/	Տեղեկություն հայտի հետ-կանչման կամ փոփոխությունն երի մասին, ինչպես նաև հայտի վերա-բերյալ հարցում-ների մասին	Հայտերի գնահատ ման արդյունք ները
1	«Աութսորս» ՍՊԸ	Ծրագիրը թերի է, բովանդակային լրամշակման կարիք ունի, մանրամասն նկարագրված չեն Ծրագրի գործողությունները,, «Ծրագրի աշխատակազմը» աղյուսակում ներկայացված է միայն աշխատակազմը, Ծրագրում ներգրավվող փորձագետների և դասընթացավարների մասին տեղեկատվությունը բացակայում է, Բացակայում են Ծրագրի աշխատակազմի յուրաքանչյուր անդամի գրավոր համաձայնությունը Ծրագրում իր ներգրավվածության և վարձատրության չափի վերաբերյալ, ինչպես նաև՝ Ծրագրի աշխատակազմի	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	7 961 280	Համաձայն հանձնաժողովի պահանջի՝ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է ոչ լիարժեք, հանձնաժողովի պահանջներից շեղում ունեցող փաստաթղթային փաթեթ:	0.55

		ինքնակենսագրականները չեն պարունակում Ծրագրով ստանձնող գործառույթների լիարժեք իրականացումը հավաստող արժանահավատ տեղեկատվություն, Դասընթացավարները ներկայացված են՝ առանց գործառույթների նկարագրման, ներկայացված չէ, թե որ դասընթացավարը որ թեմայի (թեմաների) համար է պատասխանատու, Ծրագրում ներկայացված է 7 իրավիրյալ մասնագետի մասին տեղեկատվություն, սակայն, ըստ դրամաշնորհի իրավերի պահանջի, անհրաժեշտ է ներկայացվել առնվազն 6 դասընթացավարի և 2 փորձագետի մասին տեղեկատվություն, «Հանրահռչակում և Ծրագրի տեսանելիության բարձրացմանն ուղղված քայլեր» ենթաբաժինը լրացված չէ, «Աշխատանքային պլան» աղյուսակում «Պատասխանատու» սյունակը լրացված չէ, Միջոցառումների աղյուսակը լրամշակման կարիք ունի, հստակ պետք է ներկայացնել յուրաքանչյուր միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները, միջոցառման աղյուսակում նշված «պահանջվող գումարը» պետք է համապատասխանի դրամաշնորհային ծրագրի բյուջեի հետ, լրացված չէ «հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը»: 1.1 և 1.2 ծախսային տողերը ներկայացնել՝ ըստ ամիսների, «2.1 – Հյուրանոցային ծառայություն» ծախսային տողի համար ներկայացված «Մարիա-Ռես» ՍՊԸ-ի գնային առաջարկից պարզ չէ հյուրանոցի գտնվելու վայրը, բացի այդ ֆինանսական նախահաշվում տվյալ				

		ծառայությունը անհրաժեշտ է ներկայացնել մեկ միավորի արժեքի հաշվառմամբ «2.3 – Գրենական պիտույքներ» ծախսային տողի բացվածքը ներկայացված չէ, Բացակայում են դրամաշնորհային հրավերի ՄԱՄ I-ի 4-րդ կետի 2)-րդ ենթակետով պահանջվող գնային առաջարկները ֆինանսական նախահաշվի 2.2 և 2.3 ծախսային տողերի վերաբերյալ:				

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո, համաձայն հանձնաժողովի ամփոփված գնահատման արդյունքների, ձայների 4 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց՝

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 24.12.2003թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման 32-րդ կետի ա) ենթակետով՝

2.1 ԵՔ-ԴՄ-ԵԱ-02/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը հայտարարել չկայացած:

2.2 Հաստատել ԵՔ-ԴՄ-ԵԱ-02/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

2.3 Քարտուղարին՝ ARMEPS համակարգով լուծարել ԵՔ-ԴՄ-ԵԱ-02/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի գործընթացը:

2.4 Հանձնարարել պատասխանատու ստորաբաժանմանը՝ ձևավորել նոր գնահատող հանձնաժողով «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» միջոցառման իրականացման նպատակով դրամաշնորհի հայտարարման նոր գործընթաց սկսելու համար:

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Արմենուհի Պետրոսյան

Նարինե Հովհաննիսյան

Վերոնիկա Խորասանյան